ՀԵՏԱՔՐՔՐՎԱԾՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՀՐԱՎԵՐ

(ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ – ԱՆՀԱՏ ԽՈՐՀՐԴԱՏՈՒՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ)

Հայաստանի Հանրապետություն

Շվեյցարիայի զարգացման և համագործակցության գործակալություն/
Հայաստանի Սոցիալական Նեդրումների Հիմնադրամ

Ծրագրի անվանումը: Տեղական (համայնքային/տարածքային) սոցիալական և զարգացման ծրագրերի ձևավորման և դրանց տնտեսական արդյունավետության գնահատման մեթոդաբանության մշակում:

Փաթեթի համարը (համաձայն գնումների պլանի)՝ SDC-01

Հայաստանի սոցիալական նեդրումների հիմնադրամ (ՀՍՆՀ) ստացել է դրամաշնորհ Շվեյցարիայի Զարգացման և Համագործակցության Գործակալությունից (ՇԶՀԳ) և նախատեսում է օգտագործել այդ միջոցների մի մասը Խորհրդատվական Ծառայությունների՝ Տեղական (համայնքային/տարածքային) սոցիալական և զարգացման ծրագրերի ձևավորման և դրանց տնտեսական արդյունավետության գնահատման մեթոդաբանության մշակման համար:

Առաջադրանքի նպատակը. Անհրաժեշտ է բարելավել, զարգացնել և ընդլայնել ՀՍՆՀ-ի կողմից ներկայումս օգտագործվող՝ ծրագրերին ներկայացվող պահանջների, ծրագրերի գնահատման և ընտրության մեթոդաբանությունը:

Խորհրդատուն պետք է՝

ա) մշակի համայնքների և համայնքների խմբերի / տարածքների կողմից ՀՍՆՀ-ին ներկայացվող “սոցիալական” և “զարգացման (համալիր)” ծրագրերի ընդհանրական մոդելները՝ դրանց ձևաչափի ու բովանդակության վրա դրվող պահանջները, ներառյալ դրանց իրականացման ազդեցության սպասվելիք բնութագրիչները,

բ) մշակի համայնքների և համայնքների խմբերի / տարածքների կողմից ՀՍՆՀ-ին ներկայացված “սոցիալական” և “զարգացման (համալիր)” ծրագրերի գնահատման և դասակարգման մեթոդաբանություն,

գ) մշակի գործիքամիջոց, որը հնարավորություն կտա գնահատել և դասակարգել համայնքների և համայնքների խմբերի / տարածքների կողմից ներկայացված ծրագրերը,

դ) մշակի ուղեցույցեր՝ նվիրված ՀՍՆՀ-ին ներկայացվող ծրագրերի կազմման և ՀՍՆՀ-ի կողմից այդ ծրագրերի գնահատման ու դասակարգման մեթոդաբանության պարզաբանմանը,

ե) կազմակերպի վերը նշված մեթոդաբանությունների կիրառման ուսուցում Հիմնադրամի աշխատակիցների համար:

Առաջադրանքի տևողությունը 90 օր:

Շահագրգիռ խորհրդատուները պետք է ներկայացնեն հետաքրքրվածության նամակ և տեղեկություններ, որոնք ցույց կտան, որ իրենք ունեն պահանջվող որակավորում և համապատասխան փորձ վերոհիշյալ ծառայությունները կատարելու համար:

Ընտրության չափանիշներն են.

- ☐ Մասնագիտական որակավորում տնտեսագիտության կամ մաթեմատիկայի ոլորտում,
- ☐ Ընդհանուր փորձառություն/ կատարված աշխատանքների ցանկ և համառոտ նկարագրություն,
- ☐ Քանակական և որակական հետազոտությունների իրականացման փորձ վերջին 10 տարիների ընթացքում, ուղղված տարածքային կառավարման կամ տեղական ինքնակառավարման կամ հանրային կառավարման զարգացմանը,
- ☐ Հեռավոր շրջաններում աշխատելու փորձ:

Շահագրգիռ խորհրդատուների ուշադրությունը հրավիրում ենք Համաշխարհային բանկի ուղեցույցների՝ 'Համաշխարհային բանկի փոխառուների կողմից ՎԶՄԲ-ի փոխառությունների և ՄԶԸ-ի վարկերի և դրամաշնորհների շրջանակներում խորհրդատուների ընտրություն և վարձում, հունվար 2011' ('Խորհրդատուների Ուղեցույցներ' (Guidelines: Selection and Employment of Consultants under IBRD Loans and IDA Credits & Grants by World Bank Borrowers, January 2011)), 1.9 կետի վրա, որով սահմանվում է Համաշխարհային բանկի քաղաքականությունը շահերի բախման վերաբերյալ:

Խորհրդատուի ընտրությունը կիրականացվի Համաշխարհային Բանկի ուղեցույցի (Selection and Employment of Consultants under IBRD Loans and IDA Credits & Grants by World Bank Borrowers (January,2011) բաժին V-ում սահմանված Անհատ խորհրդատուների ընտրության ընթացակարգերին համաձայն:

Շահագրգիռ հայտատուները լրացուցիչ տեղեկություններ կարող են ստանալ ՀՍՆՀ գրասենյակից Կ. Ուլնեցու 31, 4-րդ հարկ 409 սենյակ, Ձեռքբերումների բաժին, աշխատանքային օրերին ժ. 10:00-ից մինչև ժ.17:00-ը:

Հետաքրքրվածության հայտերը պետք է ներկայացվեն առձեռն կամ էլ-փոստով ստորև ներկայացվող հասցեով , ոչ ուշ քան 2014 թ. սեպտեմբերի 10-ը, ժամը 17:00-ը:

Հայասանի Սոցիալական Ներդրումների Հիմնադրամ

Ձեռքբերումների բաժին

Կ. Ուլնեցու 31, 4-րդ հարկ 409 սենյակ

Էլ-փոստ՝ asif@armeniasif.am

Հեռ: (+37410) 24 71 42